ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ դեկտեմբերի 21-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 102 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր ութսունմեկ, աշխատանքի տեղավորման միջնորդության համար՝ քսանմեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներին տրվել է դրական լուծում:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին հինգ դիմումի, տասնվեց դիմումներ վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ